

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊԶԲ-26/08 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
21	Ապրանքը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Բաճկոն՝ հանովի ուսադիրներով (տղամարդու), արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 8): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-BW արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%): Բաճկոնը առջևի մասում կոճկվում է կայծակնաճարմանդով, իսկ գոտեմասում՝ 55 սմ լայնքով ու 12-18 սմ երկարությամբ, ներկարված առածգական ժապավենով: Թիկնամասի, լանջափեշերի կրծքամասով և թևքերի թեզանիքների կտրվածքների միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ (կանտ) (2581 արտիկուլի մահուղե կտորից): Բաճկոնի վրա ներկարված են կայծակնաճարմանդով կոճկվող 2 կողային գրպան, ծոցագրպաններ, որոնցից ծախը կոճկվող է: Բաճկոնի վրա տեղադրված են հանովի ուսադիրների համար նախատեսված 2-ական ամրակներ: Բաճկոնի օձիքը կանգուն է, մշակված է մեկ կտորից: Օձիքը մուգ կարմիր գույնի է՝ 2,5 մմ եզրաշերտով, օձիքի վրա ասեղնագործվում են ոսկեգույն թելերով կաղնու ճյուղեր: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշմ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան բաճկոնի պատրաստումը բաճկոնի գունային գամման համաձայնեցվում է Գևորգի հետ: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնի կարելը) Վաճառողը Գևորգին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության

վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքի փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկով, պարկի վրա պետք է նշված լինի անվանումը ըստ վերցված անհատական չափսի, պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսը: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, Նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:
--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 77-ЕЦДЦ72Р-26/08
ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
21	